Ձև N4

Տեղեկանք
2017 թվականի գերակա խնդիրների և միջոցառումների ծրագրի տարեկան իրականացման արդյունքների

Միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ				
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումները**	**Միջոցառումների կատարման արդյունքները**	**Կարծիք**
1	2	3	4	5
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Հավելված 1, կետ 74	«Հայաստանի Հանրապետության մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություններին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 06-ի նիստի թիվ 29 արձանագրային որոշման 16-րդ կետով:	
	Հավելված 1, կետ 75	«Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստա-թղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման միասնական կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի թիվ 884-Ն որոշմամբ:	
	Հավելված 1, կետ 76	«Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 23-ի նիստի թիվ 12 արձանագրային որոշման 16-րդ կետով:	
	Հավելված 1, կետ 77	«Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման կարգը, Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման	Նախարարության աշխատակազմի կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի N 562-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը 06.03.2017թ-ի N01/15.1/1322-17	

		չափորոշիչները, ինչպես նաև դրանց հիման վրա ձևավորվող կողմնորոշիչ միավորները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: Համաձայն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ Նախագիծը ևս մեկ անգամ քննարկել ՀՀ ֆինանսների, ՀՀ արդարադատության նախարարությունների հետ, ինչպես նաև ՀՀ մարզպետարանների հետ, հաշվի առնելով ՀՀ Նախագահի աշխատակազմի առաջարկությունները: Նախագծի լրամշակված տարբերակը քննարկվել է վերը նշված մարմինների հետ և 04.09.2017թ. N01/15.2/5662-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:	
	Հավելված 1, կետ 78	«Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրա-պետության օրենքում փոփոխու-թյուններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ՝ 06.05.2017թ. №01/16.1/2770-17 գրությամբ: Նախագծով առաջարկվող ծրագրերում ներգրավված են ՀՀ Արագածոտնի, ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Լոռու, ՀՀ Կոտայքի, ՀՀ Շիրակի, ՀՀ Սյունիքի, ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Տավուշի մարզերի թվով 325 համայնքներ, որոնց միավորման արդյունքում ձևավորվելու է թվով 34 համայնք: Օրինագիծը ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է 09.06.2017թ.:	
	Հավելված 1, կետ 79	«Էլեկտրոնային փաստաթղթա-շրջանառության միասնական համակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի թիվ 884-Ն որոշմամբ:	
	Հավելված 1, կետ 80	«2017-2020 թվականներին տարածքային զարգացման առաջին գործառնական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 09-ի նիստի թիվ 47 արձանագրային որոշման 17-րդ կետով:	

	Հավելված 1, կետ 81	«Տարածքային կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարու-թյան արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	30. 11. 2017թ. թիվ 01/15. 1/7793-17 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Տարածքային կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Համաձայն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ Նախագիծը ևս մեկ անգամ քննարկել շահագրգիռ մարմինների հետ: Նախագծի լրամշակված տարբերակը քննարկվել է շահագրգիռ մարմինների հետ և 27. 12.2017թ. N-01/15.1/8462-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:	
	Հավելված 1, կետ 82	«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայե-ցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձա-նագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի նիստի թիվ 38 արձանագրային որոշման 11-րդ կետով:	
	Հավելված 1, կետ 83	«Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաս-տան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի կիրարկմանն ուղղված գործողությունների ծրագիրը հաստա-տելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառա-վարության աշխատակազմ ներկա-յացնելը	Ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի նիստի N 8 արձանագրային որոշման 15-րդ կետով:	
	Հավելված 1, կետ 84	«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի նիստի թիվ 49 արձանագրային որոշման 11-րդ կետով:	

	Հավելված 1, կետ 85	«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի նիստում:	
	Հավելված 1, կետ 86	«Անդրսահմանային տարածքային համագործակցության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի նիստում:	
	Հավելված 1, կետ 87	«Տարածքային աճի բևեռների զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի N 53 արձանագրային որոշման 30-րդ կետով:	
	Հավելված 1, կետ 88	«Համայնքային տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող ներդրումային և գործարար ծրագրերի գնահատման կարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի N 53 արձանագրային որոշման 29-րդ կետով:	
Գերակա խնդիրների իրականացման արդյունքների վերաբերյալ				
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերեկա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**	**Կարծիք**
1	2	3		5
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	**<u>Հավելված N 2</u>** **Կետ89.**	**Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում և համակարգի արդիականացում** - Տարածքային կառավարման	30. 11. 2017թ. թիվ 01/15. 1/7793-17 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Տարածքային կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության	

		հայեցակարգի մշակում - Հայեցակարգի կիրարկումն ապահովող իրավական ակտերի մշակում	արձանագրային որոշման նախագիծը: Համաձայն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ Նախագիծը ևս մեկ անգամ քննարկել շահագրգիռ մարմինների հետ: Նախագծի լրամշակված տարբերակը քննարկվել է շահագրգիռ մարմինների հետ և 27. 12.2017թ. N-01/15.1/8462-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: Տարածքային կառավարման հայեցակարգի նախագծի դրույթներին համապատասխան մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի Հայեցկարգի ընդունումից հետո:	
	<u>Հավելված N 2</u> **Կետ90.**	**Վարչատարածքային բարեփոխումների շարունակականության ապահովում** - խոշորացման ծրագրում ներառված համայնքներում տեղեկատվական ենթակառուցվածքների գնահատում - խոշորացման գործընթացի իրականացում՝ խոշորացված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների համար ընթացակարգային աշխատանքների իրականացման	Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ) տեղադրվել և գործարկվել է միավորված՝ Տեղ, Սարապատ, Արփի, Նոյեմբերյան, Այրում, Կողբ և Գորիս համայնքներում: Ս.թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ ՀԿՏՀ-ն շահագործվում է միավորված 18 համայնքներում: Քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ) են գործարկվել Նոյեմբերյան, Վանաձոր, Մեղրի, Արփի և Ամասիա համայնքներում: ՔՍԳ-ի հիմնման աշխատանքներ են ընթանում Տեղ, Աշոցք և Սարապատ (թվով՝ 3) միավորված համայնքների կենտրոններում: Ընդհանուր առմամբ, ՔՍԳ-ներ են գործում հանրապետության թվով 19 միավորված համայնքների համայնքապետարաններում: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 24.07.2017թ. №183-Ա հրամանով ստեղծվել էր աշխատանքային խումբ, որը մշակել է խոշորացված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների համար ընթացակարգային աշխատանքների իրականացման ձեռնարկը: Այն	

		ձեռնարկի մշակում, համայնքներին դրանց տրամադրում	տրամադրվել է խոշորացված համայնքներին: Խոշորացված համայնքների ավագանիների առաջին նիստերին մասնակցել են ՀՀ ՏԿԶՆ և ՀՀ մարզպետարանների պաշտոնյաները: Այժմ ամենօրյա ռեժիմով խոշորացված համայնքների ՏԻՄ-երի հետ տարվում են կազմակերպչական և հորհրդատվական աշխատանքներ:	
		- խոշորացված համայնքների ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության մշակում	Խոշորացված համայնքների ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությունը մշակվել և տրամադրվել է համայնքներին: Այդ մեթոդաբանությամբ 18 խոշորացված համայնքներում արդեն իսկ մշակվում են արդյունքահեն բյուջեները:	
		- խոշորացված համայնքների եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտների բաժնեմասի ավելացմանն ուղղված միջոցառումների իրականացում	2017 թվականի ընթացքում համայնքների սեփական եկամուտների ավելացումը հիմնականում իրականացվել է համայնքների հետ հետևողական մեթոդական աշխատանքների իրականացման, ինչպես նաև վարչարարության հաշվին, ինչի արդյունքում նկատվել է եկամուտների հավաքագրման աճ: Այսպես, մարզերի համայնքները 2017 թվականին ընդունել են սեփական եկամուտների պլանային ցուցանիշներ, որոնք 9.0 % բարձր են 2016 թվականի ցուցանիշներից: Ընդ որում, սեփական եկամուտների հիմնական հարկատեսակների մասով՝ 9.3%-ով (առանց Երևանի՝ 9.1%): 2017 թվականի 11 ամսավա կտրվածքով փաստացի հավաքագրվել է 25,438.8 մլն դրամ, որը 2016 թվականի 11 ամսվա ցուցանիշներից բարձր է 1,892.9 մլն դրամով, կամ 9.2 %-ով (առանց Երևանի՝ 8.9%): Հարկ է նշել, որ խոշորացված 18 համայնքները 2017 թվականին ընդունել են սեփական եկամուտների պլանային ցուցանիշներ, որոնք 8.3% բարձր են եղել 2016 թվականի ցուցանիշներից: Ընդ որում, սեփական եկամուտների հիմնական հարկատեսակների մասով՝ 8.2%-ով: 2017 թվականի 11 ամսավա կտրվածքով խոշորացված 18 համայնքները 1,755.6 մլն դրամ հաշվարկային ցուցանիշից փաստացի հավաքագրվել են 1,721.0 մլն դրամ, որը 2016 թվականի 11 ամսվա ցուցանիշից բարձր է 358.1 մլն դրամով, կամ 7.9 %-ով , իսկ հիմնական հարկատեսակների մասով՝ 7.7 %, որը,	

			կազմում է 1,298,593.0 մլն դրամ: Համայնքների եկամուտների ծավալում սեփական եկամուտների բաժնեմասի հետևողական ավելացման նպատակով՝ ՀՀ ՏԿԶՆ 2018 թվականի միջոցառումների ցանկում ընդգրկվել է «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը, որի ընդունումը կնպաստի համայնքների սեփական եկամուտների ավելացմանը:	
	<u>Հավելված N 2</u> **Կետ91.**	**Մարզերի մրցակցային առավելությունների բացահայտում և տարածքային զարգացման ուղիների ուրվագծում** - Մարզերի մրցակցային առավելությունների հստակեցում - Մարզերի տարածքային զարգացման ռազմավարությունների մշակում -2017-2020 թթ. տարածքային զարգացման առաջին գործառնական ծրագրի մշակում և մեկնարկ - ՀՀ մարզերում տնտեսական զարգացումն ապահովելու նպատակով դոնոր կազմակերպությունների հետ	ՀՀ մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունների նախագծերի մշակման աշխատանքների շրջանակներում՝ բացահայտվել են մարզերի մրցակցային առավելությունները, ըստ ոլորտների ներկայացվել են իրավիճակային վերլուծության արդյունքները, ինչպես նաև ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները: Նշված վերլուծությունների հիման վրա ռազմավարությունների նախագծերում նկարագրվել են նաև մարզերի զարգացման նպատակները և գերակայությունները: ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 06-ի նիստի N 29 արձանագրային որոշման 16-րդ կետով հավանության են արժանացել ՀՀ մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունները: «ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 09-ի նիստի N 47 արձանագրային որոշման 17-րդ կետով հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության 2018-2020 թվականներին տարածքային զարգացման գործառնական ծրագիրը: Ընթացքում են Եվրոպական Միության դրամաշնորհի (10 մլն.եվրո) և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ (1,75 մլն.եվրո) ՀՀ 7 մարզերում իրականացվող մարզային զարգացման	

		համատեղ ծրագրերի իրականացում - Գործառնական ծրագրերի ֆինանսավորման գործընթացներում ֆինանսական հաստատությունների, այդ թվում ունիվերսալ վարկային կազմակերպությունների ներգրավում - ՀՀ տարածքներում գործարարության զարգացման նպատակով պետական և ֆինանսական կառույցների հետ համատեղ դասընթացների կազմակերպում	թվով 7 պիլոտային (փորձնական) ծրագրերը, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզում իրականացման ենթակա ևս 1 մեկ ծրագիր գտնվում է ընտրության փուլում: Քննարկվել է «ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ» ՓԲԸ, «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» Հիմնադրամի հետ մարզային ներդրումային ծրագրերի ֆինանսավորման ընթացքում վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման հարցը: Քննարկման արդյունքներով մշակվել է բյուջետային հայտ՝ ՀՀ պետական բյուջեից «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» Հիմնադրամին հատկացվող գումարը ավելացնել և այն ուղղել ծրագրերի սուբսիդավորմանը : ՀՀ մարզերում առկա գործող և սկսնակ գործարարների բիզնես գիտելիքները կատարելագործելու նպատակով՝ ՀՀ կենտրոնական բանկի, «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի մարզային կառույցների համապատասխան մասնագետների հետ համատեղ հանրապետության 10 մարզերում կազմակերպվել են սեմինար-դասընթացներ: Սեմինար-դասընթացների ընթացքում ՀՀ մարզերում առկա գործող, ինչպես նաև սկսնակ գործարարների հետ ուսումնասիրվել են ներդրումային ծրագրերի կազմման աշխատանքներն ու գործընթացները, անհատականորեն քննարկվել է յուրաքանչյուր ծրագրային հայտ, ինչպես նաև ՀՀ վարչապետի կողմից հավանության արժանացած ծրագրերի հեղինակների հետ քննարկվել են հետագա քայլերն ու պարզաբանվել են գործընթացները:	
	<u>Հավելված N 2</u> Կետ92.	**ՀՀ արխիվային գործի բնագավառում արխիվային ծառայությունների մատուցման էլեկտրոնային համակարգի ներդրման իրականացում** - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիական հարցերի նախարարի ու Հայաստանի Հանրապե-տության տարածքային կառավարման և զարգացման նախարարի համատեղ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից համատեղ իրականացված աշխատանքների	

		հրամանի ընդունում՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից էլեկտրոնային հարցում կատարելու և «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից հարցմանը էլեկտրոնային պատասխան տրամադրելու կարգը հաստատելու մասին: -Հայաստանի ազգային արխիվի և նրա տարածքային ստորաբաժանմունքների կորպորատիվ ցանցի ստեղծում և դրա տրամաբանական միացում այն բոլոր պետական մարմինների ցանցերին, որոնք օգտվում են արխիվային տեղեկատվությունից: - Հայաստանի ազգային արխիվում իրավաբանական և ֆիզիկական անձանցից արխիվային տեղեկություն (այդ թվում՝ միասնական տեղեկության-տեղեկանքի) ստանալու համար դիմումների առցանց՝ ՀԱԱ-ի պաշտոնական կայքէջի միջոցով ստացում, այդ թվում՝ նաև էլեկտրոնային վճարման համակարգի ներդրում:	արդյունքում մշակվել և արդեն գործում է քաղաքացիների աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվության փոխանակման էլեկտրոնային համակարգը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017թ.-ի փետրվարի 9-ի թիվ 16-Ա/1 և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017թ.-ի փետրվարի 13-ի թիվ 34-Ա համատեղ հրամանով հաստատվել է վերոնշյալ տեղեկատվական համակարգի միջոցով տեղեկատվության փոխանակման հետ կապված հարաբերությունները սահմանող կարգը: 2017 թվականի հունիսի 28-ի N 01/21/4057-17 ելից գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել գրություն, որով հայտնել ենք, որ ստեղծվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի և նրա տարածքային ստորաբաժանումների կորպորատիվ ցանց, որը միաժամանակ միացվել է այն բոլոր պետական մարմինների ցանցերին, որոնք օգտվում են արխիվային տեղեկատվությունից: ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից ընդունվել է ի գիտություն: Ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ 22.09.2017 թվականի թիվ 01/21/6061-17 գրությամբ	
	<u>Հավելված N 2</u> **Կետ93.**	**Հայաստանի Հանրապետության մարզային ենթակայության առողջապահական համակարգի օպտիմալացում** - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի, Ծաղկահովտի		

		բժշկական կենտրոնի, ՀՀ Կոտայքի մարզի առողջության առաջնային պահպանման կենտրոնների և ՀՀ Շիրակի մարզի «Սամարիթեր» վերականգնողական կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման ուղղությունների և ֆինանսական վիճակի վերլուծություն: - վերլուծության արդյունքներով Աշտարակի բժշկական կենտրոնի շենքային պայմանների օպտիմալացման, բարելավման, ծառայությունների որակի բարձրացման, ֆինանսական կայունության ապահովման, ինչպես նաև Ծաղկահովտի բժշկական կենտրոնի ֆինանսական կայունության և ծառայությունների որակի բարձրացման, ՀՀ Կոտայքի մարզի առողջության առաջնային պահպանման կենտրոնների միավորման, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի «Սամարիթեր» վերականգնողական կենտրոնը Գյումրու բժշկական կենտրոնին միավորելու վերաբերյալ առաջարկությունների մշակում և շահագրգիռ մարմինների հետ քննարկում: - Քննարման արդյունքներով ՀՀ կառավարություն առաջարկությունների ներկայացում:	Արդյունքում՝ 1) ՀՀ կառավարության կողմից 25.05.2017թ. ընդունվել է «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին գույք նվիրաբերելու և ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին» թիվ 573-Ա որոշումը: 2) ՀՀ կառավարության կողմից 10.08.2017թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 958-Ն որոշումը, որով օպտիմալացվել են «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, «Ծաղկահովիտի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն և «Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ը, ինչպես նաև դադարեցվել է «Ուշիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՀՈԱԿ-ի գործունեությունը:	
	<u>Հավելված N 2</u> **Կետ94.**	**Հայաստանի Հանրապետության մարզային ենթակայության կրթական հաստատությունների օպտիմալացում** - մազային ենթակայության կրթական		

		համակարգի ֆինանսատնտեսական վիճակի և ծառայությունների մատուցման որակի բարձրացման պոտենցիալի վերլուծություն: - Մասնագիտական քննարկումներ շահագրգիռ մարմինների հետ: - Քննարկումների արդյունքներով ՀՀ Կոտայքի մարզի Զովաշենի հիմնական դպրոցը Հատիսի միջնակարգ դպրոցին, Փյունիկի միջնակարգ դպրոցը Արտավազի միջնակարգ դպրոցին միացնելու, Աբովյանի N 8 հիմնական դպրոցի և Աբովյանի N 6 ավագ դպրոցի (տալով միջնակարգ դպրոցի կարգա-վիճակ) միաձուլման, ինչպես նաև վերլուծության արդյունքներով, ըստ անհրաժեշտության, մյուս մարզերի կրթական հաստատությունների վերակազմակերպման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ:	Արդյունքում՝ 1) ՀՀ կառավարության կողմից 24.08.2017թ. ընդունվել է «ՀՀ Կոտայքի մարզի Զովաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու և գույք հետ վերցնելու մասին» թիվ 1036-Ա որոշումը: 2) ՀՀ կառավարության կողմից 24.08.2017թ. ընդունվել է «ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու և գույք հետ վերցնելու մասին» թիվ 1039-Ա որոշումը: 3) ՀՀ կառավարության կողմից 24.08.2017թ. ընդունվել է «Փարաքարի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու և գույք հանձնելու մասին» թիվ 1051-Ա որոշումը:	
	<u>Հավելված N 2</u> **Կետ95.**	**Մարզային ենթակայության կրթական հաստատությունների բյուջեների և ծախսերի կատարման թափանցիկության ապահովում** - Կրթական հաստատությունների 2016 թվականի բյուջեների և կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվու-թյունների տեղադրում կրթական հաստատությունների և մարզպետա-րանների կայքէջերում:	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 23.01.2017թ-ի N 01/15.1/300-17 և 22.02.2017թ-ի N01/15.1/1052-17 հանձնարարականների հիման վրա մարզային ենթակայության կրթական հաստատությունների 2016 թվականի բյուջեների և կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները ՀՀ մարզպետարանների կողմից տեղադրվել են մարզպետարանների կայքէջերի «Տեղեկատվական կենտրոն» բաժնում: Վերը նշվածի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել 22.02.2017թ-ի N 01/15/1014-17 գրությամբ:	

		- Կրթական հաստատությունների 2017 թվականի բյուջեների և ծախսերի կատարման եռամսյակային հաշվետվությունների տեղադրում կրթական հաստատությունների և մարզպետարանների կայքէջերում:	Կրթական հաստատությունների 2017 թվականի բյուջեների և ծախսերի կատարման տարեկան տվյալները սահմանված ժամկետում տեղադրվում են մարզպետարանների կայքէջերում: Սակայն, հաշվի առնելով 2018 թվականի հունվար ամսվա ոչ աշխատանքային օրերի տևողությունը, ինչպես նաև տարեկան կտրվածքով հաշվետվությունների կազմման անհրաժեշտությունը՝ ներկայումս աշխատանքներ են տարվում հաշվետվություններն ամփոփելու և կայքէջերում տեղադրելու ուղղությամբ, որն ամբողջության հնարավոր կլինի իրականացնել հունվարի 3-րդ տասնօրյակում:	